ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Տ. ՎԱՀԵ ԱԲԵՂԱ ՄԿՐՏՉՅԱՆ

ՏԱԹԵԻ ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԻՄՆՈՒՄԸ

(համառոտ ակնարկ)

Սյունյաց նահանգը բավական հարուստ է եղել վանքերով: ԺԳ դարի պատմագիր, Սյունյաց աշխարհի մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանն իր պատմության մեջ 30 վանքի ցուցակ է ներկայացնում՝ ավելացնելով. «Բայց ուրիշ շատերն էլ կային, որոնք չթվեցինք»[1]: Ինքնին հասկանալի է, որ այդ քանակի վանքերը չէին կարող շեն ու բարգեկարգ վիճակում լինել փոքր եւ տնտեսապես ոչ հարուստ լեռնային երկրում: Օրբելյանը այդ վանքերի կացության մասին նշում է. «Որոնցից շատերը ամայի են ու թափուր շենությունից: Այժմ քչերն են լուսավորության մեջ»[2]: Այդ բոլոր վանքերի գլխավորն ու կենտրոնականն էր Տաթեւի վանքը՝ «Սիսական տան բոլոր վանքերի գլուխն ու շնորհաբաշխության աղբյուրը»[3]:

Տաթեւի վանական համալիրը գտնվում է պատմական Սյունյաց նահանգի Ծղուկ գավառի հարավարեւելյան կողմում՝ նույնանուն գյուղից մեկ կիլոմետր դեպի հարավ: Տաթեւ գյուղի հյուսիսային կողմում գտնվող Կաթավասարից դեպի հարավ տարածվում է մի հարթավայր, որն անմիջապես իջնում է դեպի վանք: Այդ հարթավայրը, վանական համալիրի արեւելյան, հարավային ու արեւմտյան կողմերից կտրտված լինելով խոր ձորերով՝ երեք ճակատից կազմում է կիսաբոլորակ մի բարձր քարաժայռ, որի պռնկին կառուցված է Տաթեւի վանքը:

Վանքի Տաթեւ անվան ծագման մասին կան մի քանի բացատրություններ, ավանդազրույցներ: Ըստ ստուգաբանության՝ «Տաթեւ» անունը ստացել է ի պատիվ Ս. Թադեոս առաքյալի աշակերտ եւ նրա կողմից Սյունյաց առաջին եպիսկոպոս ձեռնադրված Եւստաթեոսի կամ Ստաթեի անվան հետ (համարվում է նաեւ Քրիստոսի 72 աշակերտներից մեկը), որն այստեղ քրիստոնեություն է քարոզել եւ նահատակվել: «Իր գործունէութեան եւ վախճանին վրայ տեղեկութիւններ չունինք,- գրում է Մաղաքիա արքեպս. Օրմանյանը,- միայն գիտենք, թէ իր գերեզմանը պատուուած է Տաթեւու վանքին մէջ, որուն անունն ալ Եւստաթէոսի անունէն առնուած կը կարծուի, իբր Եւստաթէի վանք»[4]: Այսինքն՝ վանքը կոչվել է Եւստաթեոսի կամ Ստաթեի վանք, որը, ժամանակի ընթացքում ժողովրդի բերանում աղավաղվելով եւ հնչյունափոխվելով՝ վերածվել է «Տաթեւ» անվանաձեւի:

Արտակ եպս. Սմբատյանցը, որը 1922-27 թթ. եղել է Սյունիքի առաջնորդ եւ Տաթեւի վանքի վանահայր, իր «Համառոտ պատմութիւն Տաթեւի վանքի» աշխատության մեջ գրում է. «Այսօր էլ, Տաթեւի վանքի գերեզմանատան արեւմտեան ծայրին, դէպի վանքն իջնող

1 **Ստեփանոս Օրբելյան**, Սյունիքի պատմություն, Եր., 1986, էջ 283 (այսուհետեւ՝ **Ստեփանոս Օրբելյան**):
2 Անդ:
3 Անդ, էջ 281:
4 **Մաղաքիա արք. Օրմանյան,** Ազգապատում, հատոր Ա, Ս. Էջմիածին, 2001, էջ 25:

ճանապարհի ափին կա մի կիսաւեր քարուկրեայ փոքրիկ մատուռ: Ժողովուրդը ցոյց է տալիս այդ մատուռը իբրեւ Սպաթէ առաքեալի նահատակութեան տեղը, ինչպէս գյուղի քահանան եւ ուրիշներն ինձ ասացին: Սակայն հակառակ այդ աւանդութեան, ժողովուրդը այդ մատուռը չէ յարգում իբրեւ ուխտատեղի»[5]: Անցած տարի Տաթեւի վանքում տեսա Արտակ եպիսկոպոսի նշած «կիսաւեր քարուկրեայ» փոքրիկ մատուռը, սակայն տեղացի գյուղացիները, չգիտես ինչու, այն կոչում են «Աղքատաց եկեղեցի», եւ ոչ մի հիշողություն չկար կապված Եւստաթեոս աշակերտի նահատակության վայրի հետ:

Ստեփանոս Օրբելյան պատմիչը, որը մանրամասնորեն անդրադառնում է Սիսական նահանգի կարեւոր ու նշանակալից անցքերին, մեծ գովեստով է խոսում Սյունիքի մետրոպոլիտական աթոռի մասին, իր պատմության մեջ ոչ մի տեղ չի հիշատակում Թադեոս առաքյալի Եւստաթեոս աշակերտին: Մինչդեռ նա գրում է Բարդուղիմեոս առաքյալի կողմից սյունեցիների մեջ Ավետարանի քարոզության եւ այդ վիճակի համար Կումսիին եպիսկոպոս ձեռնադրելու մասին. «Բարդուղիմեոսը նրանց համար վերակացու է նշանակում, որպեսզի նորից չմոլորվեն կռապաշտությամբ: Իր աշակերտներից մեկին՝ Կումսի անունով, ձեռնադրելով եպիսկոպոս ու նրան հանձնելով Սուրբ Հոգուն՝ ինքը գալիս է Վանանդ գյուղը»[6]: Ոչ միայն Օրբելյան պատմիչը, այլեւ նրանից առաջ եղած պատմիչները՝ Մովսես Խորենացին, Ասողիկը, Հովհաննես Կաթողիկոս Դրասխանակերտցին եւ ուրիշները, իրենց պատմություններում երբեք չեն հիշատակում, որ Եւստաթեոսը եկել է Սյունյաց նահանգ, քարոզել, նահատակվել եւ թաղվել Տաթեւում: Կարապետ եպիսկոպոս Շահնազարյանցը, որը 1850-53 թթ. եղել է Տաթեւի վանահայրը, ինչպես նաեւ Ստեփանոս Օրբելյանի պատմության առաջին հրատարակիչը, իր հրատարակությանը կցած «Սիւնիք» առաջաբանում գրում է. «Ի ժամանակէ անտի[7*] մինչ ցեւս երեքտասաներորդ դարուն եպիսկոպոսարանն Տաթեւոյ յիշատակի միշտ եւ յամենայնի յանուն սրբոյ Խաչին[8**], յանուն գլխաւոր առաքելոցն Պետրոսի եւ Պօղոսի, յանուն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, այլ ոչ բնաւ յանուն սրբոյն Սպաթէի: Ապաքեն եթէ այս անուն անծանօթ էր ամենեւին ի Սիւնիս յընթացս 1300 ամաց, զիա՞րդ ապա ի յետնոց եւ յաննշանից ոմանց հռչակաւոր վանքն այն Տաթեւոյ, որ կառուցաւ ի սկզբան անդ յանուն սրբոց առաքելոցն Պետրոսի եւ Պօղոսի՝ փոխեցաւ յանուն Սպաթէի: Այլք թող բացատրեսցեն որպէս եւ կամին, իսկ իմ պատասխանի այս է թէ՝ կամ ոմանք ի մերոց հակառակասիրաց ի ժամանակի զայրանալոյ Ունիթոռութեանն ի Ճահուկ եւ յԵրնջակ՝ փոփոխմամբ այսուիկ անհետ առնել կամեցան զանուանս երկուց առաքելոցն Հռոմէական եկեղեցւոյ, կամ թէ՝ պգէտք ոմանք խաբեալք ի մերձաւորութենէ Տաթեւ եւ Սպաթէ հնչմանց՝ զՏաթեւն փոխեցին ի Սպաթէ, եւ այսպես մնաց մինչեւ ցայսօր»[9]:

---

5 **Արտակ եպիսկոպոս Սմբատյանց**, Համառօտ պատմութիւն Տաթեւի վանքի, «Տաթեւ» տարեգիրք, Հալեպ, 1930, էջ 279 (այսուհետեւ՝ Արտակ եպս.):

6 **Ստեփանոս Օրբելյան**, էջ 77:

7 * Նկատի ունի Ը դարի վերջը կամ Թ դարի սկիզբը, երբ Սյունյաց առաջնորդարանը հաստատվեց Տաթեւում:

8 ** Տաթեւ վանական համալիրում Ս. Խաչ անունով եկեղեցի չկա: Հավանաբար վանքն այդպես է կոչվել այն պատճառով, որ մի շարք սրբությունների հետ վանք է բերվել հայտնի Բաբկենյան խաչը, որը փղամարդու հասակի չափ ուներ, պատրաստված էր արծաթից՝ Սյունյաց Անդոկ իշխանի որդի՝ Բաբիկի որդու՝ Վասակի կողմից եւ իր մեջ մաս ուներ փրկչական խաչափայտից:

9 «Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփանոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց»-ի լոյս ընծայեաց համդերձ ծանօթութեամբք Կարապետ վարդապետ Շահնազարեանց՝ միաբան սրբոյն Էջմիածնի, հ. Ա,

Մինչեւ ԺԳ դարի կեսերը հայ մատենագիրներից ոչ ոք չի հիշատակում Եւստաթեոս առաքյալի նահատակությունը Տաթեւում կամ առհասարակ Սյունիքում: Թերեւս առաջին հեղինակը, որը Եւստաթեոս անունը կապում է Տաթեւի հետ[10], ԺԳ դարի հեղինակ Վարդան վարդապետ աշխարհագիրն է, որն իր կազմած «Աշխարհացոյց»-ում գրում է. «Մեծ Սիւնիս եւ Փոքր Սիւնիս, ուր կայ աթոռն Եւստաթէի առաքելոյն, որ կոչի Տաթեւ»[11]:

Տաթեւ վանական համալիրն ունի երեք եկեղեցի՝ Ս. Պողոս-Պետրոս, Ս. Գրիգոր Լուսավորիչ եւ Ս. Աստվածածին: Հիշատակարանում նշված են միայն Ս. Գրիգոր Լուսավորիչ եւ Ս. Աստվածածին եկեղեցիները եւ բաց է թողնված կամ թերեւս Եւստաթեոսի անունով է փոխարինված Ս. Պողոս-Պետրոս անունով գլխավոր եկեղեցին:

Հայր Ղեւոնդ Ալիշանը, անհավանական համարելով Տաթեւի վանքի անվան սերումը Եւստաթեոսի անունից, եւս կարծում է, որ «Տաթեւ» անունը հին հայկական անուն է՝ թերեւս քրիստոնեությունից շատ առաջ ծագած: Նա գտնում է, որ Տաթեւ գյուղը շրջակայքով եղել է մի նշանավոր իշխանական տոհմի բնակատեղի: Այն չի հիշվել պատմության մեջ, ինչպես շատ ուրիշ նշանավոր վայրեր, որոնք միայն քրիստոնեության տարածվելուց հետո են հայտնի դարձել: Տաթեւի վանքն ու գյուղը պատմության մեջ երեւան են գալիս Ը դարի վերջին եւ Թ դարի սկզբին, այսինքն՝ Տաթեւ անունը «սեփականագոյն է գեղջն, իսկ համբաւն՝ վանացն»[12]:

Սերգեյ Ումառյանը գրում է. «Տաթեւ անունը, մեր կարծիքով, փոքրասիական ծագում ունի: Այն խեթա-լուվիական երկնքի եւ ամպրոպի Դաթա կամ Տատա անունից պետք է լինի»[13]:

Կա նաեւ «Տաթեւ» անվան ստուգաբանության վերաբերյալ մի ժողովրդական ավանդազրույց: Այն պատմում է, որ Տաթեւի վանքի շինարարությունն ավարտելուց հետո ճարտարապետը բարձրանում է գլխավոր եկեղեցու գմբեթի վրա՝ խաչը դնելու: Նա խնդրում է ներքեւում կանգնած բանվորներից երկու տախտակ, բռնում է ձեռքում, համբուրում եւ ասում. «Հոգին Սուրբ տա՛ թեւ»: Անմիջապես տախտակները թեւերի են վերածվում, եւ նա թռչում, աներեւութանում է: Այս պատճառով վանքի անունը մնացել է Տա-թեւ, Տաթեւ[14]:

Մինչեւ Սյունյաց առաջնորդարանի Տաթեւ փոխադրումը, Դ-Ը դարերում Սյունիքի վարչական եւ հոգեւոր կենտրոնը Շաղատ գյուղաքաղաքն էր, որը գտնվում է Սիսիանի շրջանում: Ը դարում արտաքին ուժերի բռնությունների հետեւանքով իշխանական գահը Շաղատից փոխադրվում է Վայոց Ձոր, իսկ դրանից մի կարճ ժամանակ հետո եպիսկոպոսական աթոռը Շաղատից տեղափոխվում է Տաթեւ: Դեռեւս Ս. Ներսես Մեծ եւ Ս. Սահակ Պարթեւ հայրապետների ժամանակ Տաթեւի վանքի այժմյան շինության տեղը անշուք ու անտաշ քարերով կրաշաղախ մի եկեղեցի է եղել, որտեղ սակավաթիվ կրոնավորներ են բնակվել մշտաջան ճգնությամբ[15]:

Փարիզ, 1859, էջ 32-33:

10 Անդ, էջ 33:

11 «Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի», Փարիզ, 1960, էջ 12:

12 **Ղեւոնդ Ալիշան**, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 224:

13 **Սերգեյ Ումառյան,** Սյունիքը դիցարան, Եր., էջ 30:

14 **Երուանդ Լալայեան**, Զանգեզուրի գաւառ, հ. Ա, Թիֆլիս, 1899, էջ 24:

15 **Ստեփանոս Օրբելյան,** էջ 194:

Նախկինում սահմանված կարգի համաձայն՝ Սյունյաց եպիսկոպոսները բնակվում էին քաղաքներում ու գյուղական միջավայրերում, «որովհետև հովիվը պիտի հոտի մեջ լինի եւ ոչ թե ինչ-որ անկյունում առանձնացած մնա. շարունակ ներքնատեսությամբ պիտի վերահսկի հոտին, որ խորամանկ մոլորեցնողը չմտնի այնտեղ, գողանա անմեղների հոգիները եւ դուրս տանելով՝ շեղի հոտից»[16]: Սակայն Սյունյաց առաջնորդների մեջ եղան այնպիսիները, որոնք, լինելով ճգնակյաց ու անապատասեր, ձգտելով աչքերի ու ականջների անդորրության, պապշաճ համարեցին բնակվել վանքերում եւ հարմար ժամանակ դուրս գալ հոգեւոր հոտի մեջ եւ խրատել[17]: Այսինքն՝ Սյունյաց հոգեւոր կենտրոնի Տաթեւ տեղափոխման հիմնական պատճառներից է այն, որ առաջնորդները ցանկանում էին եպիսկոպոսարան ունենալ խաղաղ, աշխարհիկ կյանքից հեռու մի տեղում, ինչպես նաեւ «շինութեան տեղն ընտրել էին՝ թէ բնութեան անման գեղեցկութիւններն ի նկատի ունենալով (հայկական վանքերի մեծագոյն մասի առանձնայատկութիւնն է այդ) եւ թէ նոյն տեղը դիւրութեամբ պարսպապատելու եւ անմերձենալի ամրոց դարձնելու»[18]: Եւ այսպես, Սյունիքի եպիսկոպոսները, այս տեղը խնդրելով իշխաններից, հաստատվեցին Տաթեւում՝ իրենց հետ բերելով բազում սրբություններ՝ ասպվածամուխ սուրբ Նշանը՝ պատրաստված փրկչական խաչափայտից եւ Սյունյաց եպիսկոպոսների միջոցով բերված Հունաստանից, Բաբկենյան խաչը, Ս. Հովհաննես Մկրտչի, տասնմեկ առաքյալների, Ս. Ստեփանոս Նախավկայի եւ Ս. Գրիգոր Լուսավորչի նշխարները, Ս. Հռիփսիմե կույսի աջը, Ս. Մարիամ Աստվածածնի մազերից մի մաս եւ այլն: «Այս բոլորը բերելով՝ կենտրոնացրին եկեղեցու մեջ ու այն դարձրին ասպվածության հարուստ գանձարան»[19]: Սակայն պատմագիր Օրբելյանը տեղյակ չէ, թե երբ եւ Սյունյաց որ եպիսկոպոսն է առաջինը եկել Տաթեւ. «միայն Տեր Գեւորգից ի վեր գտա հիշատակություն եւ ծանոթացա նրանց բոլոր որպիսություններին»[20]:

Թ դարի առաջին կեսին Սյունյաց առաջնորդ եւ վանքի վանահայր է նշանակվում Գեւորգ եպիսկոպոսին հաջորդած Դավիթ եպիսկոպոսը (մոտ 838-861): Վերջինս տեսնելով, որ Տաթեւի առաջնորդարանը կարիք է զգում տարածքը մեծացնելու եւ ընդարձակելու, 839 թ. Սյունյաց Փիլիպե իշխանից գնում է այն հողերը, որոնք ընկած են Տաթեւի վանքից դեպի հյուսիս՝ մինչեւ Տաթեւ գյուղը: Այնուհետեւ Փիլիպե իշխանը՝ որպես մեծահավատ եւ բարեպաշտ քրիստոնյա, վանքի տարածքներն ավելի է ընդարձակում: Նա 844 թ. իր սեփական կալվածք Տաթեւ գյուղն իր հողերով նվիրում է վանքին: Այդ առթիվ մի գրություն է գրում ու իր մատանիով կնքում, որ հետագայում իր ժառանգներից ոչ ոք իրավունք չունենա այդ կալվածքները խլելու վանքից[21]: 848 թ. Փիլիպե իշխանը Տաթեւի հին եկեղեցուն կից (որը թերեւս ուներ Ս. Խաչ անունը)՝ հարավային կողմում, կառուցել է տալիս մի փոքրիկ, գեղեցիկ եկեղեցի՝ Ս. Գրիգոր Լուսավորիչ անունով: Եկեղեցին եղել է անսյուն, կամարակապ եւ սրբատաշ քարից շինված: Եւ երբ մահանում է Փիլիպե իշխանը, թաղվում է իր իսկ կառուցած

16 Անդ, էջ 193:

17 Անդ:

18 **Մեսրոպ Մագիստրոս արքեպս. Տէր-Մովսիսեան,** Հայկական երեք մեծ վանքերի՝ Տաթեւի, Հաղարծինի եւ Դադիի եկեղեցիները եւ վանական շինութիւնները, Երուսաղէմ, 1938, էջ 6:

19 **Ստեփանոս Օրբելյան,** էջ 195:

20 Անդ:

21 Անդ,էջ 197:

եկեղեցու դռան առջեւ: Արտակ եպս. Սմբատյանցը գրում է, որ իշխանի գերեզմանաքարը, որն առանց արձանագրության է, այսօր էլ ոմանք ցույց են տալիս[22]:

Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին տարբեր ժամանակներում մի քանի անգամ կառուցվել է: Առաջին կառուցողը, ինչպես վերեւում նշեցինք, Փիլիպե իշխանն էր: ԺԱ դարի սկզբներին պարսիկ ասպատակիչների հարձակման ժամանակ ամբողջ Տաթեւի վանքը հրի է մատնվում: Թ-շնամին հրկիզում եւ կործանում է Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին` այն փայտով լցնելով: Այդ ժամանակ վանքից, բարեբախտաբար, բացակայում էր առաջնորդ Հովհաննես եպիսկոպոսը (1006-1058), որը վերադառնալով Տաթեւ` տեղի իշխանների օժանդակությամբ սկսում է ավերակները վերականգնել, նոր շինություններ ավելացնել: Ամենից առաջ նա վերաշինում է Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին եւ նորաշեն եկեղեցում տեղադրում է Ս. Գրիգոր Լուսավորչի մասունքները, որի մասին Օրբելյան պատմիչը գրում է. «Այնտեղ է դնում հոգեւոր գանձը, գոյակների մեջ անհամեմատելին` Ս. Լուսավորչի պատվական ու երջանիկ նշխարը` գլխի մի կողմը եւ մյուս բազուկը, ամփոփելով աջակողմյան մեծ կամարի սյան գլխին` մարդկանցից աննկատ, որը հետագայում նույն տեղում գտնվեց մեր նվաստության կողմից` նույն կապարե կնիքով»[23]: Հովհաննես եպիսկոպոսի վերաշինած Լուսավորիչ եկեղեցին երկրորդ անգամ կործանվում է բնության հարվածից: 1138 թ. Գանձակի ուժեղ երկրաշարժի հետեւանքով Առաքելոց գլխավոր եկեղեցու գմբեթը ընկնում է Լուսավորիչ եկեղեցու վրա եւ հիմնահատակ կործանում: Եկեղեցին այդպես մնում է մինչեւ պատմագիր Օրբելյանի առաջնորդության ժամանակ (1286-1303): Երրորդ անգամ կառուցվում է այն 1295 թ., իսկ կատարված գործը եկեղեցու դռան վերեւի մասում թողած արձանագրությամբ հավերժացնում. «Ի թվ. ՉԽԴ զՏր. Ստեփաննոս մետրապաւլիտ Սիւնեաց որ է պռատաֆրաւնտէս հայոց մեծաց որդի, մեծափառ իշխանին Տարսաիճին, շինող սբ. եկեղեցյս յիշեցէք ի Քս»[24]: Այս եկեղեցին ներսից եւ դրսից կառուցված է սրբատաշ մեծ քարերով: Եկեղեցու հյուսիսային պատը միացած է Առաքելոց եկեղեցու հարավային պատին: Այսօրվա Տաթեւի վանքի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին Օրբելյան պատմիչի կառուցածն է, որը հավանաբար իր տեսքով տարբերվում է Փիլիպե իշխանի կառուցած եկեղեցուց:

Թ դարի վերջերին Սյունյաց առաջնորդական աթոռակալն ու վանքի վանահայրն էր Հովհաննես եպիսկոպոսը (մոտ 888-918), որի օրոք շենացավ ու ծաղկեց Տաթեւի վանքը: Օրբելյան պատմիչը Հովհաննես եպիսկոպոսի մասին գրում է, որ ծնունդով Ծղուկ գավառից էր, մի աղքատ ու մուրացիկ մարդու որդի: Նրա հայրը երկրորդ անգամ ամուսնանում է մի չարասիրտ կնոջ հետ, որը, շարունակ ծեծելով ու քաղցած պահելով, տանջում էր պատանի Հովհաննեսին: Խորթ մոր հետ Հովհաննեսը պահում էր գյուղատիրոջ ընտանի թռչուններին: Եւ ահա մի օր այդ թռչուններից շատ ճտեր կորցնելով` պատանի Հովհաննեսը չի համարձակվում տուն գնալ եւ փախչում է ու ապաստան գտնում Տաթեւի վանքում` մի կրոնավորի մոտ, որից ուսում է ստանում ու զարգանում կրոնական գիտելիքներով: «Քանի

22 **Արտակ եպս. Սմբատեանց**, էջ 282:

23 **Ստեփանոս Օրբելյան**, էջ 266:

24 «Դիվան հայ վիմագրության», Պրակ Բ, կազմեց Ս. Գ. Բարխուդայան, Եր., 1960, էջ 25 (այսուհետեւ` Դիվան):

որ լի էր աստվածային շնորհով, հարուստ բանականությամբ ու պայծառ հիշողությամբ»[25], Սյունյաց Դավիթ եպիսկոպոսը նրան ձեռնադրում է կուսակրոն քահանա: Հովհաննեսն իր նախորդի՝ Սյունյաց Սողոմոն եպիսկոպոսի մահվանից հետո, տեղի բոլոր իշխանների եւ վանքի միաբանության հավանությամբ ընտրվում է գահակալ Սիսական մետրոպոլիտական աթոռի եւ վանքի վանահայրության: Այնուհետեւ մեծաշուք կերպով Հովհաննեսին ուղարկում են ժամանակի Հայոց Կաթողիկոս Գեւորգ Բ Գառնեցու մոտ (877-897), որն էլ նրան ձեռնադրում է եպիսկոպոս Սյունյաց առաջնորդության համար:

Հովհաննես եպիսկոպոսը տեսնելով, որ Տաթեւի հին Ս. Խաչ եկեղեցին անշուք է, երկրաշարժից խարխլված եւ չի պատշաճում Սյունյաց առաջնորդարանի գլխավոր եկեղեցին լինելու, շարունակ ներքնապես տանջվում է եւ հնար չի գտնում, որովհետեւ մի կողմից չի համարձակվում քանդել հին եկեղեցին, իսկ մյուս կողմից ենթադրում է, թե չի կարողանա իրականացնել նոր եկեղեցու շինարարությունը՝ հսկայական ծախսերի պատճառով: Ահա մի գիշեր երազում հրաման է ստանում. հին եկեղեցին քանդել եւ նոր եկեղեցու շինարարությունը սկսել: Այդ տեսիլք-երազը կրկնվում ու երրորդվում է, մինչեւ որ հրեշտակն ամբողջապես հավաստի է դարձնում այդ իրողությունը, որպեսզի խաբուսիկ երեւույթ չկարծի: Նաեւ հրեշտակն իր գավազանով սահմանագծում է տեղը եւ հրամայում եկեղեցին կառուցել գլխավոր առաքյալներ Ս. Պետրոսի եւ Ս. Պողոսի անունով: Հովհաննես եպիսկոպոսն այս մասին տեղեկացնում է Սյունյաց գահերեց իշխան Աշոտին, նրա կնոջը՝ խորահավատ Շուշանին, ինչպես նաեւ Գեղարքունիք գավառի իշխան Գրիգոր Սուփանին եւ Բաղք գավառի Զագիկ իշխանին, որոնք, ուրախանալով աստվածային տեսիլքի համար, բացում են իրենց գանձարանները եւ մեծ նվերներ տալով՝ 895 թվականին հիմք են դնում Տաթեւի Ս. Առաքելոց եկեղեցու շինության[26]: Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու արեւմտյան պատի արտաքին երեսի հարավային մասի ներքեւում պահպանվել են եկեղեցու շինության սկիզբը հայտարարող արձանագրության հատվածներ, որ վերականգնվում է Ստեփանոս Օրբելյանի պատմությամբ. «Յամին յորում թուական Հայոց :ՅԽԴ: էր, եւ զատիկն ի նաւասարդի ի :Դ:. Ես Տէր Յովհաննէս որ երկրորդ կարգեցայ եպիսկոպոս Սիւնեաց զկնի տեառն Սաղամանի, արարի սկիզբն շինուածս եկեղեցւոյս»[27]: Առաքելոց եկեղեցու շինարարությունը տեւում է 11 տարի եւ ավարտվում 906 թվականին: Այս եկեղեցու ներսում կառուցված է չորս մեծ կամար, որոնց վրա բարձրացող գեղեցիկ գմբեթը, 12 նեղ լուսամուտներով լուսավորում է եկեղեցու ներսը: Եկեղեցին շինված է միապեսակ, սրբատաշ, կապույտին տվող մոխրագույն բազալտե քարերից, որոնցից կազմված են այն վիթխարի ժայռերը, որոնց վրա վանքն է կառուցված: Առաքելոց եկեղեցին ունի երկու սյուն, որոնց հիմքերում ամփոփված են Ս. Պետրոս եւ Ս. Պողոս առաքյալների նշխարները, իսկ մյուս երկու սյուները կեղծ են եւ դուրս են բերված արեւմտյան դռան երկու կողմերում շինված խորանների պատերի մեջ: «Սյունյաց վարպետները կառուցելով Տաթեւի տաճարը, չգնացին հնավանդ ձեւերի պարզ ընդօրինակման ճանապարհով, այլ վերացնելով արեւմտյան մույթերը, փոխարինելով նրանց ավանդատների շատ ավելի ուժեղ եւ հաստատուն

25 **Ստեփանոս Օրբելյան**, էջ 205:
26 Անդ, էջ 207:
27 Տե՛ս անդ, տե՛ս նաեւ «Դիվան», էջ 13:

պատերով, զգալիորեն ուժեղացրին ինչպես կառուցվածքի ընդհանուր ամբությունը, այնպես էլ նրա սեյսմակայունությունը»[28]:

Առաքելոց եկեղեցին ունի բավական մեծ լուսամուտներ, որոնցից հյուսիսային եւ հարավային կողմերը ունեն չորս հատ, իսկ արեւելյան ու արեւմտյան կողմերը՝ մեկական: Եկեղեցու չորս անկյուններում կան ավանդատներ, որտեղ եղել են պատարագամատույց սուրբ սեղաններ: Այս չորս ավանդատներն էլ ունեն մեկական լուսամուտ, ընդ որում արեւելյան ավանդատները լուսավորվում են արեւելյան կողմից, իսկ մյուս երկուսը՝ արեւմտյան:

Առաքելոց եկեղեցու հարավային պատի արտաքին երեսին՝ զուգակցված լուսամուտներից առավել ցածր դասավորություն ունեցող լուսամուտի տերեւազարդ երեսակալի կենտրոնում, տեղավորված է մի մարդապատկեր՝ դեմքի երկու կողմից մինչեւ ուսերն իջնող գալարուն հյուսվածքներով:

Համանման մարդապատկեր տեսնում ենք նաեւ հյուսիսային ճակատի արեւմտյան լուսամուտի երեսակալի վրա, որտեղ արդեն հանդես է գալիս երեսակալի ամբողջ երկարությամբ ձգված օձերի բարձրաքանդակների ուղղությամբ, ընդ որում օձերի գլուխներն ուղղված են դեպի կենտրոնում՝ տեղավորված մարդու բարձրաքանդակը: Նույն այդ մոտիվն ավելի ցայտուն կերպով դրսեւորվում է նաեւ արեւելյան ճակատում՝ երկու եռանկյուն խորշերի երեսակալներում: «Թեեւ Ե-Է դարերում հուշարձանների երեսակալների վրա քիչ չեն հանդիպում իշխանների բարձրաքանդակներ եւ հատկապես սրբապատկերներ, եւ նույնիսկ հայտնի են երեսակալներ՝ օձերի ռելիեֆներով, սակայն համանման զուգակցում, երբ մարդապատկերի երկու կողմերում տեղավորված լինեին օձեր, անհայտ է մեզ, եւ առաջին անգամ հանդիպում ենք այստեղ՝ Տաթեւում»[29]: Մարդապատկեր քանդակներից եւ ոչ մեկը չունի լուսապսակ եւ բացի այդ, բացառությամբ հարավային ճակատի պատկերաքանդակի, մյուս բոլոր դեպքերում մարդկային դեմքի երկու կողմում տեղավորված են մեկական օձեր, որոնք որոշակի հիմք են տալիս ենթադրելու, որ այստեղ ոչ թե սրբապատկերներ են, այլ այն իշխանների պատկերաքանդակները, որոնք օգնեցին Հովհաննես եպիսկոպոսին՝ Առաքելոց եկեղեցին կառուցելու[30]: Թեեւ պատկերաքանդակների տակ չկան համապատասխան արձանագրություններ, այնուամենայնիվ հնարավոր է դառնում գեթ մոտավոր չափով որոշել նրանց պատկանելությունը: Այսպես, կասկած չի կարող լինել, որ վերոնշյալ իշխաններից քանդակագործները պետք է շեշտեին Աշոտ գահերեց իշխանին եւ նրա կնոջը՝ Շուշանին: Հավանաբար եկեղեցու առավել պատվավոր տեղում՝ արեւելյան խորշերի երկու երեսակալների կենտրոններում, պատկերված են հենց նրանց պատկերաքանդակները: Հյուսիսային թեւի պատկերաքանդակն առանձնակի շեշտված է նրանից վեր տեղավորված մի հիանալի, նրբագեղ վարդյակի միջոցով, ինչն հիմք է տալիս ենթադրելու, որ հատկապես այստեղ է պատկերված հինը՝ Աշոտ գահերեց իշխանը: Նույն ճակատի հարավային երեսակալի վրա էլ, անշուշտ, տեղավորված է նրա կնոջ՝ Շուշան իշխանուհու պատկերաքանդակը: Մյուս երկու պատկերաքանդակները տեղավորված են համեմատաբար երկրորդական տեղերում՝ հյուսիսային եւ հարավային ճակատների լուսամուտների վերեւում: Ուշագրավ

28 **Ս. Խ. Մնացականյան,** Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը, Եր., 1960, էջ 106:
29 Անդ, էջ 115:
30 Անդ:

է պատկերաքանդակների տարբերությունը: Հյուսիսային ճակատի պատկերաքանդակը տեղավորված է համեմատաբար ավելի աչքի ընկնող տեղում եւ նրա երկու կողմերում (ինչպես եւ արեւելյան ճակատի պատկերաքանդակներում) տեղադրված է մեկական օձ: Ընդ որում պետք է նշել, որ հարավային ճակատում դրանք բոլորովին բացակայում են, եւ պատկերաքանդակն ուղղակի տեղավորված է լուսամուտի երեսակալի զարդամոտիվների շարքում: Պատկերաքանդակների միջեւ եղած այսպիսի տարբերությունը չի կարող պատահական լինել: Հյուսիսային ճակատում տեղավորված է հատկապես Գրիգոր Սուփանի պատկերաքանդակը, իսկ հարավայինում՝ Բաղաց Զագիկ իշխանը: Այսպիսի եզրակացության հանգումը պայմանավորված է նրանով, «որ Գրիգոր Սուփանը սերում էր նույն իշխանական տնից, ինչ որ գահերեց իշխան Աշոտը. երկու իշխանական տների նահապետն էր Վասակը: Այս պայմաններում բացառված չէ, որ օձերն այստեղ պետք է առանձնակի շեշտեին նշված իշխանական տոհմի ներկայացուցիչներին եւ հանդես գային որպես տվյալ իշխանական տան ֆեոդալական զինանշան»[31]:

Ս. Պողոս-Պետրոս եկեղեցին նախապես ունեցել է երկու մուտք, որոնցից այժմ գործածական է արեւմտյանը, իսկ մյուսը՝ հարավայինը, փակվել է 1787 թ., երբ դռան առջեւ անփոփված Ս. Գրիգոր Տաթեւացու գերեզմանի վրա Սյունիքի առաջնորդներից Հովակիմ եպիսկոպոսը կառուցել է տալիս մատուռ-դամբարան:

Հովհաննես եպիսկոպոսն Առաքելոց եկեղեցու արեւմտյան պատին կից կառուցում է մի աղոթատուն-դամբարան, որտեղ թաղվել են Սյունյաց նշանավոր իշխաններն ու եպիսկոպոսները: Այս շինությունը կանգուն է մնացել մինչեւ 1890 թ., երբ Տաթեւի վանքի վանահայր եւ Սյունյաց թեմի փոխանորդ Անանիա վարդապետ Համազասպյանը, թույլատրություն ստանալով Ս. Էջմիածնի հոգեւոր իշխանությունից, քանդել է տալիս աղոթատունը, որը 1138 թ. Գանձակի մեծ երկրաշարժի հետեւանքով կորցրել էր իր ամրությունը: Այդ քանդված աղոթատան տեղը 1903 թվականին կառուցվում է զանգակատուն՝ Փիլիպոս Աղբակեցի Կաթողիկոսի կողմից շինված Ս. Էջմիածին Մայր տաճարի զանգակատան նմանությամբ, սակայն առավել փոքր չափերով: «Տաթեւի նոր Զանգակատունը բուն տաճարից բարձր է շինուած, ուստի եւ համաչափութիւնը չպահպանելով՝ վանքը տգեղացել է եւ ընդհանուր գեղեցկութիւնը կորցրել»[32]:

Առաքելոց եկեղեցին երեք խորաններում ունի գաղտնարաններ: Գաղտնարաններն այն անհրաժեշտ տեղերն էին, որոնցից բոլոր մեծ վանքերը պետք է ունենային, որպեսզի թշնամիների անակնկալ հարձակումների ժամանակ կարողանային թաքցնել վանքի արժեքավոր իրերը: Այդ երեք գաղտարաններից երկուսը գտնվում են արեւմտյան աջ ու ձախ ճակատներին՝ բարձր դիրքում: Դրանք ձգվում են արեւմտյան աջ ու ձախ կողմերի խորանների տանիքների տակով: Երրորդ գաղտնարանը գտնվում է ավագ խորանի առաստաղի աջ կողմում: Այդ գաղտնարանը բաղկացած է երկու միմյանց մեջ բացվող փոքրիկ, մարդու հասակից բարձր սենյակներից, որտեղ ազատ կարելի է քայլել: Գաղտնարաններից յուրաքանչյուրն ունեցել է բերանակալ քար, եւ անտեղյակ մեկը չէր կարող ճանաչել, թե որն է գաղտնարանի անցքի քարը:

31 Անդ, էջ 208:

32 **Արտակ եպս. Սմբատեանց** էջ 327:

Տասնմեկ տարում Առաքելոց եկեղեցին կառուցելուց հետո նույն 906 թ. Հովհաննես եպիսկոպոսը վանքի բակի հարավային կողմում շինել է տալիս մի գավազան-սյուն՝ Ս. Երրորդություն անունով, որն ունի ճոճվելու հատկություն: Քանի որ վանքի տեղանքն անհարմար էր, Հովհաննես եպիսկոպոսը գետնի հապտ թմբերը հարթել է տալիս եւ խոր տեղերը բարձրացնում կրաշաղախով: Ամբողջ վանական համալիրը պարսպապատում է, կառուցում բազմաթիվ կացարաններ, սեղանատներ, արհեստանոցներ, մթերանոց-պահեստներ, գրատներ եւ այլն: Վանքի մյուս բոլոր կառույցների շինարարությունն ավարտելուց հետո Հովհաննես եպիսկոպոսը հեղամուտ է լինում Առաքելոց եկեղեցու նավակատիքի հանդեսին: Օծման արարողությանը ներկա էին հայոց Սմբատ Ա թագավորը՝ մի շարք երեւելի իշխաններով, Հովհաննես Դրասխանակերտցի Կաթողիկոս-պատմագիրը՝ բարձրապատիվ հոգեւորականների շքախմբով, Աղվանքի Սիմեոն Կաթողիկոսը՝ իր երկրի եպիսկոպոսներով ու մեծամեծ իշխաններով: Օրբելյան պատմիչը հրաշալի կերպով նկարագրում է 906 թ. տեղի ունեցած Առաքելոց եկեղեցու արարողությունը. «Ապա առավոտը բացվելիս հայրապետները եւ բոլոր եպիսկոպոսները զգեստավորվելով բեմ բարձրացան ու կատարելով հոգեւոր օրհնությունը՝ օծեցին ասպվածասպեղծ յուղով: Եւ թող օրհնվի, թող օծվի ասելիս ամբողջ բազմությունն այնքան բարձր էր արտասանում, որ լսողներին թվում էր, թե հրեղեն ամպերից ահարկու որոտ ու ճայթյուններ էին գալիս. երկիրը դղրդում էր, շրջակայքը՝ ցնցվում: Եվ ես այնպես եմ կարծում, թե լոկ մարդկային ձայներ չէին, այլեւ դրանց խառնվում էին ոչ մարմնական ձայներ, որ այդպես ահարկու էին թվում: Եւ այսպես կատարելով օրհնությունը՝ ութ օր նավակատիք արեցին ի փառս Աստծու»[33]: Առաքելոց եկեղեցու օծման առիթով Սմբատ թագավորը եւ հայոց Կաթողիկոսը ստորագրում են Սյունյաց եպիսկոպոսարանին տրվող կալվածքների «գիր-վճիռը», որով Տաթեւի վանքը տեղական եւ այլ գավառների իշխաններից ստանում է 17 գյուղ: Այսպիսով, վանքը հարստանում է կալվածքներով: Միաբաների թիվը, ինչպես պատմագիր Օրբելյանն է նշում, հասնում է մինչեւ 500-ի, որոնք, վանքի հողերը, այգիները մշակելով, հզորացնում են տնտեսությունը:

Հովհաննես եպիսկոպոսին հաջորդած Հակոբ եպիսկոպոսը (918-959), որը Հովհաննես Դրասխանակերտցի Կաթողիկոսի եղբորորդին էր, 930 թ. Բյուզանդիայից հրավիրում է ֆրանսիացի հայտնի նկարիչների եւ Տաթեւի վանքի Առաքելոց եկեղեցու ներսի բոլոր պատերը նկարազարդել է տալիս գեղեցիկ որմնանկարներով: Եկեղեցու ներսի արեւելյան պատին՝ խորանի վերեւի կիսաբոլորակի վրա պատկերված է եղել Հիսուս Քրիստոս՝ գահի վրա նստած, ավելի ներքեւ՝ Ս. Սեղանի շուրջ, նկարված էին մարգարեների, առաքյալների ու հայրապետների խորհրդավոր որմնապատկերները: Արեւմտյան պատին պատկերվել էր Ահեղ Դատաստանը, իսկ հյուսիսայինին՝ ծննդյան տեսարանները պատկերող հոյակապ կոմպոզիցիաներ: Օրբելյան պատմիչն այս որմնանկարների մասին գրում է. «Եւ երբեք չէր թվում, թե ներկերով ու երանգներով են ստեղծված, այլ բոլորն էլ կենդանի ու բնական են, եւ նայողները զարհուրում ու պատկառում էին նրանցից»[34]: Այնուհետեւ Հակոբ եպիսկոպոսը հրավիրում է Հայոց Կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցուն՝ բազմաթիվ

33 **Ստեփանոս Օրբելյան,** էջ 209-210:
34 Անդ, էջ 228-229:

եպիսկոպոսներով ու իշխաններով հանդերձ՝ այդ պատկերները սրբագործելու եւ օրհնելու: Ցավոք, դարերի ընթացքում տեղի ունեցած երկրաշարժերի եւ պատերի անցքերից ներծծված անձրեւաջրերի հետեւանքով այդ գեղեցիկ որմնապատկերներն ամբողջովին վնասվել են եւ մնացել են լոկ չնչին պատառիկներ:

Հակոբ եպիսկոպոսն իր կյանքի վերջին տարիներին հարում է քաղկեդոնականության, ինչի պատճառով ժամանակի Անանիա Մոկացի Կաթողիկոսը գալիս է Տաթեւի վանք եւ նրան զրկում Սյունյաց առաջնորդի պաշտոնից, վերցնում մետրոպոլիտական իրավունքները, միաբաններին ցրում, որով եւ վանքն սկսում է անշքանալ: Հակոբ եպիսկոպոսի մահվանից մոտ 50 տարի հետո Տաթեւի վանքի առաջնորդ է նշանակվում Հովհաննես եպիսկոպոսը (1006-1058): Իր առաջնորդության օրոք Հովհաննես եպիսկոպոսը վերականգնում է մետրոպոլիտական իրավունքները եւ Տաթեւի վանքը նորից ծաղկեցնում ու փարթամացնում է: ԺԱ դարի առաջին քառորդին մահմեդական հրոսակները հարձակվում են Տաթեւի վանքի վրա, սպանում մի քանի միաբանների, թալանում վանքի հարստությունը եւ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին ու մի շարք վանական շինություններ այրելուց հետո հեռանում են: Հովհաննես եպիսկոպոսը, որն այդ ընթացքում բացակա էր վանքից, վերադառնալով ու տեսնելով այդ ավերածությունները, չի հուսահատվում, այլ Սյունյաց Սմբատ թագավորի եւ իշխանների օգնությամբ վերականգնում է Ս. Գրիգոր Լուսավորիչ քանդված եկեղեցին, նաեւ վանքի այրված մյուս շինությունները: 1043 թ. Հովհաննես եպիսկոպոսը Առաքելոց եկեղեցու հարավային պատին կից, Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու առաջամասում կառուցում է մի գեղեցիկ սյունազարդ սրահ՝ իբրեւ դամբարան Սյունյաց առաջնորդների եւ հենարան Առաքելոց եկեղեցու հարավային պատի: Այդ սրահի շինության արձանագրությունը գտնվել է ներսից՝ հյուսիս-արեւմտյան առաջին սյան երեք քարերի վրա. «Յամի յորում էր թ[իվ]ն :ՆՂԲ: ի թագաւորութեանս Սմպատայ որդւոյ Աշոտոյ ես Տր Յովանէս շինեցի զսրահս, աւգնականութեամբ Սմպատայ: Որք աղաւթէք յիշեցէք ի Քս»[35]: Այս սյունազարդ եւ կամարակապ սրահը բավական հարուստ է եղել արձանագրություններով, որոնք հիմնականում վանքին կատարված նվիրատվությունների մասին են: Սրահի հատակին գերեզմանաքարեր կան: Այստեղ է նաեւ թաղվել հռչակավոր վարդապետ Ս. Գրիգոր Տաթեւացին, որի գերեզմանի վրա 1787 թ. Տաթեւի առաջնորդներից Հովակիմ եպիսկոպոսը, որը ծնունդով Ծղուկ գավառի Անգեղակոթ գյուղից էր, սպիտակ գույնի սրբատաշ քարերով եկեղեցանման մի դամբարան է կառուցել տալիս այդ սրահի մեջ, որի պատճառով գլխավոր եկեղեցու հարավային մուտքը փակվում է: Այս մատուռ-դամբարանի արտաքին երեսի վրա Հովակիմ եպիսկոպոսը փորագրել է տալիս մի երկար արձանագրություն, որում մեկ առ մեկ թվում է այն անձանց անունները, որոնք օժանդակել էին այս շինության կառուցմանը[36]:

1931 թ. տեղի ունեցած երկրաշարժի հետեւանքով ամբողջ Տաթեւ վանական համալիրը հիմնահատակ կործանվում է: 1970-ական թվականներին սկսված վանքի վերականգնողական աշխատանքների դադարեցման պատճառով այս հարավային սրահը մինչեւ այսօր մնացել է չվերականգնված:

Հովհաննես եպիսկոպոսին հաջորդում է Գրիգոր եպիսկոպոսը (1058-1116): Վերջինս

35 Դիվան, էջ 19:

36 Արձանագրությունն ամբողջությամբ տե՛ս «Դիվան», էջ 23-24:

վանքի «Մեծ դարպաս» կոչված գլխավոր մուտքը արեւմտյան կողմից տեղափոխում է արեւելյան կողմ: Այս նոր կամարակապ դարպասի վրա Հովհաննես եպիսկոպոսը 1087 թ. կառուցում է Ս. Աստվածածին երկհարկանի դամբարան-եկեղեցին: Սյունյաց ճարտարապետական դպրոցի հուշարձանների շարքում յուրահատուկ տեղ են գրավում երկհարկանի դամբարան-եկեղեցիները: Մինչեւ այժմ Սյունիքում հայտնաբերված է համանման երեք հուշարձան, ընդ որում բոլոր դեպքերում պահպանված է կոմպոզիցիոն միեւնույն սկզբունքը. առաջին հարկի դամբարանի վրա բարձրանում է երկրորդ հարկի մատուռ-եկեղեցին: Սակայն չնայած դրան՝ բոլոր երեք դամբարան-եկեղեցիները, (Եղեգնաձորի շրջանում գտնվող Ցաղացքարի վանքը, Վահանավանքը եւ Տաթեւի վանքը), խիստ կերպով տարբերվում են միմյանցից եւ ունեն միանգամայն տարբեր հատակագծային եւ տարածական լուծումներ: Տաթեւ վանական համալիրի Ս. Աստվածածին եկեղեցու առաջին հարկը հիմնականում նախատեսվել է որպես դամբարան նշանավոր իշխանների եւ հոգեւորականների համար, իսկ բուն եկեղեցին, որտեղ բարձրանում են քարե աստիճաններով, երկրորդ հարկում է (գմբեթավոր, առանց խորանի փոքրիկ մի եկեղեցի): Այս եկեղեցու կառուցվածքի ճարտարապետական ձեւերը նման են Ժ-ԺԱ դարերում ընդունված մոտիվներին, եւ ուշագրավ է, որ մի շարք զարդաձեւեր համարյա նույնությամբ վերցված են Առաքելոց գլխավոր եկեղեցուց: Այսպես, օրինակ՝ արեւելյան լուսամուտի երեսակալը գրեթե նույնությամբ կրկնում է այն զարդաձեւերը, որոնք այնքան լայն օգտագործում են գտել գլխավոր եկեղեցում (ոճավորված տերեւներ, նշաձեւ զարդամոտիվներ եւ այլն): Ուշագրավ է նաեւ եկեղեցու ութանիստ, նուրբ որմնասյուներով ձեւավորված թմբուկը, եւ բացառված չէ, որ այստեղ ևս իրենց դրսեւորումն են գտել Առաքելոց եկեղեցու թմբուկի ձեւերը[37]:

Ս. Աստվածածին եկեղեցու արեւմտյան պատի վրա՝ մուտքի մոտ, Գրիգոր եպիսկոպոսը քանդակել է տվել եկեղեցու կառուցմանը վերաբերող հետեւյալ արձանագրությունը. «Ի շրջագայութեան տոմարի Հայկական :Ժ:ից Յորեղինաց եւ :Լ: եւ :Զ: թվոց. Ես՝ Գրիգոր ամենանուաստ ծառայ Քի եւ ողորմութեամբ նորին եպիսկոպոս Սիւնեաց, կանգնեցի կամարքս եւ ի վերայ զեկեղեցիս եւ զոր այլ շինութիւնս է եւ որ այլ աշխատութիւն էին տանս եւ արդիւնք վկա են եկեղեցիքս եւ յորժամ յաւարտումն եկն ամենայնս կամեցան եղբարք եւ կարգաւորք տանս վարձահատոյց լինել ինձ եւ խնդրաւք իմաւք կարգեցին քառասունք մին որ յամենայն տարոջ կատարեն վասն փրկութեան տառապեալ հոգոյս իմոյ որչափ սբ եկեղեցիքդ ի հաստատութեան են արդ որ զկնի մեր յաջորդիք ի սբ աթոռդ հայրապետք եւ կարգաւոր տանս պարտական են այդ քառասնոցդ որ անխափան կատարեն յամենայն տարոջ որ խափանման պատճառք լինի եղեալ ժամոյդ ինչ եւ իցէ պատճառանաւք եւ ոչ կատարէ եւ զրկէ զհոգիս իմ եթէ ի հարապետաց եթէ ի կարգաւորաց զրկեալ եւ որոշեալ լինի ի փառաց Որդոյն այնժամ եւ հանդերձելումն եւ անէծս կրեսցէ ի սբ Երրորդութենէն եւ մի գտցէ թողութիւն ի Քէ ԱՅ իսկ հաստատիչք գրոյս աւրհնեալ են յԱՅ»[38]:

Եւ այսպես, Գրիգոր եպիսկոպոսի կառուցած Ս. Աստվածածին եկեղեցիով ամբողջանում է Տաթեւ վանական համալիրը, որտեղ դարեր շարունակ հնչել են մեր աստվածառաք աղոթքներն ու շարականները եւ զարգացել աստվածաբանական դպրությունը:

37 **Ս. Խ. Մնացականյան,** Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը, էջ 194:
38 «Դիվան», էջ 28:

1931 թ. ապրիլի 27-ին ութ բալանոց երկրաշարժի հետեւանքով Տաթեւ վանական համալիրը հիմնովին վերածվում է ավերակների: 1970-ական թվականներին Խորհրդային Հայաստանի «Հնությունների պահպանության կոմիտեն» ձեռնարկում է վանական համալիրի վերականգնողական աշխատանքները: Սակայն շինարարական աշխատանքները խորհրդային կարգերի փլուզումից հետո դադարեցվում են, որի պատճառով մի քանի վանական կառույցներ եւ շինություններ մինչեւ այժմ, դժբախտաբար, մնում են չվերականգնված: Բայց եւ այնպես լիահույս ենք, որ հոգեւոր վերանորոգության այս ժամանակաշրջանում կվերանորոգվի Տաթեւ վանական համալիրը՝ իր նախկին շքեղությամբ ու փառքով: